

Ս. Բաղդասարյան

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԱՍՍԻՆ

Արդի դրական լեզուն որքան էլ մշակված, հարուստ ու բազմակողմանի չի լինի, այնուամենայնիվ, նրա ոճերի, դարձվածքների, հարադիրների, թեափոր խոսքերի, ասացվածքների դանձարանը կարելի է հարստացնել բարբառներից, այդ հնարավոր կլուսնա միայն այն ժամանակ, երբ լիակատար, բազմակողմանիորեն ուսումնասիրվեն մեր լեզվի հարստություններից մեկը կազմող շուրջ 40 տերիտորիալ բարբառները։ Առանց դրան երբեք չի կարելի ավարտված համարել հայոց լեզվի ամբողջական ուսումնասիրությունը։ Բարբառագիտության հարցերի մարքսիստական լուծումը հնարավորություն կընձևոթի հայ լեզվաբանական գիտությանը ավելի ճշգրիտորեն ու բազմակողմանի պարզարանել հայերենի բառապաշարի, քերականական կառուցվածքի, նրա պատմական զարգացման, անցած էտապների հետ կապված պրոբլեմները։

Մշո բարբառը, որպես հայոց լեզվի հարուստ բարբառներից մեկը, տարբեր ժամանակներում հանդիսացել է լեզվաբանների, բանասերների ուշագրություն արժանան։ Անցյալում, թե պարբերական մամուլում, թե առանձին հրատարակություններով այդ բարբառին վերաբերող նյութեր են հրապարակվել, որոնք, բայց բնույթի, կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ ա) տեղական-հետազոտական, բ) ժողովրդական բանահյուսական։ Համառոտակի նշենք դրանցից ավելի կարևորները։

1869 թվականին խոշորագույն հայագետ Փերոյիս Պատկանյանը հրատարակել է «Исследование о диалектах армянского языка» աշխատությունը, որի հավելվածում գետնիդրված է մի հատված՝ Մշո բարբառով, նույն հետազոտողի գրչին է պատկանում 1875 թվականին լույս տեսած՝ «Материалы для изучения армянских наречий» երկու հատորից բաղկացած երկասիրությունը, որի երկրորդ հատորի ենթավերնագիրն է «Мушский диалект»։ Այս հատորի մեջ հեղինակը ամփոփում է Մշո բարբառով հետաքրքրություն ներկայացնող նյութերը։

Բավական մեծ համատեղ և զստահություն խոսելով նախնիների բարբառով նյութեր բնագրերից առաջին հատորի մասին Պատկանյանը շատ թերահավատ է երկրորդ հատորի նկատմամբ։ Այդ մասին նա ասում է, թե դրանք հավաքել է պատահական աղբյուրներից, աղբյուրներ, որոնցից նա նույնիսկ չի կարողացել եզրակացնել, թե որտեղ և ինչ խոսվածքներով են գրանք գրի առնված։

Երանի որ տեքստերի մեջ ուշագրություն չի դարձված ուղղագրություն միակերպության վրա, հետևապես հնարավոր չէ ճշտորեն որոշել Մշո բարբառի հնչյունական հարաբերությունը գրարարի հետ։ Նույն բառը հանդիպում է տարբեր տեղերում, տարբեր ուղղագրությամբ, այնպես որ զգալի

է եղրակացնել նրա ճշգրիտ արտասանութիւնն ու օգտագործումը, — գրում է նա I հ. առաջարանում: Պատկանյանի հալաքած և հրապարակած նյութերի մասին գրեթէ նույն կարծիքն է հայտնել Լևոն Մսերյանցը: „Этюды по армянской диалектологии“ աշխատության առաջին մասի առաջարանում կարգում ենք:

«Այդ հրատարակության տեքստերը չեն բավարարում խիստ դիտական պահանջներին»: Նույն հեղինակի մագիստրոսական գիտերտացիայի պաշտպանության ժամանակ արտասանված ճառի մեջ կարգում ենք:

«Երբ ես սկսեցի ուսումնասիրել այդ տեքստերը, ապա իսկույն զգացի նրանց ամբողջ աննպատակահարմարութիւնը լեզվաբանական նպատակների համար: Ի միջի այլոց նշենք, որ նրանք այդ նպատակը չեն էլ հետապնդել: Ֆոնոլոգիստները շատ քիչ են ուշադրութիւն դարձրել լեզվի հնչյունական կազմի վրա և գրի են առել տեքստերը, հարմարեցնելով նոր, գրական հայերենի ուղղագրութեանը, այնպես որ բարբառի հնչյունական երևույթը մնացել է քողարկված»¹:

Այդ նյութերի մեջ տեղ են գտել բարբառիս համար ոչ բնորոշ բառեր ու բառաձևեր. Գոման (էջ 25), ասեցին (1—25), ո՞ւր է, քապլէն (էջ 2), օղուլ, վիրավորել և այլն: Բարբառիս փերականական երևույթները պատկերող հատվածը չի անցնում կցկտուր գիտությունների սահմանից, որոնք շատ հաճախ իրենց արգարացումը չեն գտնում Մշո բարբառում:

1874 թվականին հայ բանահյուսութեան ֆանասեր մշակ Դարեգին Սրվանձտյանը Կ. Պոլսում հրատարակեց «Գրոց բրոց» խորագիրը կրող գիրքը:

Այն պատումները, որ գրի է առել հեղինակը երբեմն, նույնիսկ այն տեղերում, որտեղ մշեցու ուղղակի խոսքն է մեջ բերում, լրի են այսօր, ինկավ, գլջացի (էջ 26) և նման այլ բառերով, որոնց առկայութիւնը Մշո բարբառում չի էլ ենթադրվում: Նույն հեղինակի գրչին ևն պատկանում «Մանանա» և «Համով-հոտով» աշխատութիւնները:

«Համով-հոտով»-ի 134-րդ էջից սկսվում է մի նոր բաժին, որի առաջարանում հեղինակը գրում է, որ իր նպատակն է պատմել բարբառով, սակայն՝ չափահաս, հեռի աշխարհներ, բնծայեց, անոր, ծառան էր, սպառեցան, շրջապատը, գղակը, անցողնի, համարձակէր բառերը, բառակապակցութիւնները, ինչպես նաև բազմաթիւ փերականական ձևեր Մշո բարբառին հատուկ չեն:

Շնորհակալ աշխատանք է կատարել հայագետ Լևոն Մսերյանցը Մշո բարբառի ուսումնասիրութեան գործում: 1897—1901 թվականներին նա հրատարակել է „Этюды по армянской диалектологии“ երկու մասից բաղկացած աշխատութիւնը, որից առաջին մասը նվիրված է Մշո բարբառի հնչյունաբանութեան, իսկ երկրորդը՝ ձևաբանութեան ուսումնասիրութեանը: Եթէ հաշվի չառնենք Մշո բարբառի փերականութեան մասին գեղքից գեղք, այս կամ այն առիթով, զանազան հեղինակների կողմից արված գիտությունները, ապա Մսերյանցի այս աշխատութիւնը, իր թերութիւններով հանդերձ՝ տվյալ բարբառի առաջին բնագրական, արժեքավոր ուսումնասիրութիւնն է:

¹ Л. Мсерианц, Армянская диалектология, стр. 12.

Մշո բարբառով նյութերի ենք հանդիպում և այլ տեղերում: Ճեմինյան ազգագրական ժողովածուի¹ Դ հատորից սկսած նյութեր են զետեղված նաև Մշո բարբառից: Բանահավաք Ս. Հայկունին «Ճեմինյան ազգագրական ժողովածու»-ում հրատարակել է տեքստեր Ալաշկերտի, Իսկանուխի, Խնուսի բարբառներով: Ջ հատորում հրատարակված են երգեր, առածներ, աղոթքներ, օրհնություններ, երգումներ, ծածկարանություններ, շուտասելուկներ և այլն: Նույն ժողովածուի Ը հատորում Հ. Աճառյանը գրում է. «Դժբախտարար առնք գիտական ուղղագրությամբ չեն»²: Մեծագույն հայագետ Աճառյանի այս գնահատականը, ամենայն իրավամբ, վերաբերում է նաև «Ճեմինյան ազգագրական ժողովածու»-ներում տպագրված, ինչպես նաև այլ նյութերին ու պատմումներին:

Երգովազատակ գիտնական Հ. Աճառյանի բեղուն գրչին է պատկանում «Ճեմինյան ազգագրական ժողովածու»-ի «Հայ բարբառագիտություն» վերնագիրը կրող Ը հատորը: Շուրջ 30 բարբառների համառոտ նկարագիրը և նմուշները տալու հետ մեկտեղ նա կանգ է առնում նաև Մշո բարբառի վրա, բերում է հատվածներ, քերականական շատ արժեքավոր տեղեկություններ է տալիս:

Ծանոթ լինելով Մշո բարբառի հետ առնչվող նյութերին, մենք միաժամանակ ձգտել ենք հավաքել ու գրի առնել նոր նյութեր և հիմնականում մեր գիտողությունները կատարել ենք այդ նյութերի հիման վրա: Դրանց սկզբնաղբյուրները եղել են Մուշից դաղթած և այժմ ռեսպուբլիկայի սահմաններում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս բնակվող բարբառախոս հայերը:

Սովետական Հայաստանում Մշո բարբառով խոսող հայեր բնակվում են Թալինի, Ալադյաղի, Ապարանի, Աշտարակի, Արթիկի, Աղինի, Էջմիածնի, Մարտունու շրջաններում: Ռեսպուբլիկայի սահմաններից դուրս բնակված թվով մշեցիներ են բնակվում Թրիլիսիում, Բողդանովկայի շրջանում, Բաթումիում և այլ վայրերում:

* * *

Մշո բարբառը պատկանում է հայերենի «կր» ճյուղի բարբառների թվին: Բաղաձայնական սխառմը քառաստիճան է, բացի ձայնեղներից, խուլերից և խուլ շնչեղներից առկա են նաև ձայնեղ-շնչեղ պայթականներ՝ փ', փ', փ', փ', փ', որոնք գտնվում են բացառապես բառակազմի:

Կարնո, Կրևանի, Ն. Ջուղայի բարբառների նման այն կս ունի երկու և հնչյուն, ձայնեղ՝ յ, Յ և խուլ՝ և:

Ձայնեղ և-ն հանդիպում է միայն ձայնավորով սկսվող բառերի սկզբում, ակաճ>ջանգաջ, աղրիւր>ջաղալուր, արձակ>ջառցագ, ելանել>ջէլնալ, երգումն>ջեռթում, երեկո>ջիրգուն, ընկեր>ջընգէր, ընտիր>ջընդիր, իմանալ>ջիմնալ, իջանել>ջիչնալ, իւրեար>ջիրար, յիրուր և այլն:

Այս օրենքը, սակայն, բացարձակ չէ: Ձայնավորով սկսվող բաղմաթիվ բառերի սկզբում այդ ձայնեղ և-ն բացակայում է, աղուէս>աղվէս, աղութ>աղրութ, աղջիկ>ախչիկ, եղունգ>ըղունգ, երազ>էրազ, էրաձ,

¹ Հ. Աճառյան, Ճեմինյան ազգագրական ժողովածու, Ը հատոր, էջ 121:

երամ>էրամ, երեք>իրյէք, ընծայ>ընծա, ընծիւղ>ընծուղ, իմ>իմ, իմուն, և այլն:

Ձայնավորների սխտեմով Մշո բարբառը, որոշ չափով, տարբերվում է գրաբարից. երբեմն գրաբարյան այս կամ այն ձայնավորի դիմաց առկա են այլ հնչյուններ:

Դրաբարյան ա-ին բարբառում հիմնականում համապատասխանում է ա-ն, բացի դրանից ա-ի դիմաց հանդիպում ենք ր, է, օ ձայնավորներին անդէն>ընդ էն, ինադէն, ամենայն>յրմէն, ածել>րծյէլ, աղանակ>>էղէվնէգ, էղլրնէգ, աղինճ>էղինջ, արծաթ>արձաթ, առաջ>յառէջ, թառամ>թոռմուգ, թոռմընգ, թառամեցունել>թոռմըցյէլ և այլն:

Եւ ձայնավորի դիմաց Մշո բարբառում բառասկզբում, մի շարք միավանկ բառերում կա յէ եզն>յէդ, ել>յէլ, եո>յէո, երգ>յէրք, ես>յէս:

Բաղմավանկ բառերի սկզբում գրաբարյան ե-ին մեծ մասամբ համապատասխանում է է-ն՝ եղան>էղան, եռալ>էռալ, երաղ>էրաղ, էրաձ, երկոտանի>էրգուօզնէն:

Եւ դիմաց յէ կա նաև միավանկ բառերի մեջ և մեկից ավելի վանկ ունեցող բառերի շեշտված վանկերում.

թել>թյէլ, բեմ>բյէմ, բեոն>բյէո, երեք>իրյէք, անթեղ>անթյէդ:

Եւ դիմաց բարբառում հանդիպում ենք ի, ը, ա ձայնավորներին՝ երեկոյ>յրգուն, երեք>իրյէք, եմ>իմ, ես>իս, ածելի>առձլի, սեղմել>>սըլմյէլ, եղունգ>ըղունգ, եղբայր>ախպէր, եղբայրասպան>ախպէրասպան:

Դերանունների, կապերի և օժանդակ բայի ժխտական ձևերի մեջ մեծ մասամբ ե-ի դիմաց կա ու:

Քեղ>քըղի, մեղ>մըղի, հեա>հըա, դեո>դըո չեմ>չըմ, հես>հըս և այլն:

Է ձայնավորը բարբառում գրեթե անփոփոխ է մնում: Նույնը պետք է ասել նաև ը ձայնավորի մասին:

Դրաբարի ի ձայնավորն բարբառում մեծ մասամբ համապատասխանում է ի-ն, սակայն, սակավադեպ, այդ հնչյունի դիմաց բարբառում առկա են ու, ա, ը ձայնավորները.

նինջ, նիրհ>նունջ, սպի>սըրա, դեպի>դըրա, մի>մր, (մրխօսա, մրկարթա):

Որոշ փոփոխությունների ենթարկվում է և ո ձայնավորը. Բառասկզբում նրա դիմաց, հիմնականում, կա օ. ոչխար>օխչար, որդի>օրթի, քոնալ>օոնալ: Միավանկ բառերի մեջ ո-ն հնչում է ուօ, մոմ>մուօմ, կոժ>կուօժ, գոմ>գուօմ և այլն:

Բացի միավանկ բառերից, այն երկրաբարբառում է նաև մեկից ավելի վանկ ունեցող բառերի վերջին, շեշտված վանկում:

Ու ձայնավորի դիմաց բարբառում մեծ մասամբ, կա ու: Երբեմն ու-ի փոխարեն առկա են ը, օ, և այլ ձայնավորներ. ուլն, ուլուք>հըլու, քուրջ>քըրջ, ուղղօրդ>օղօրթ, դուխ>դլուխ: Ո ձայնավորը, գրեթե միշտ, մնում է անփոփոխ:

Բարբառում կարևոր հնչյունափոխական դործոն է շեշտը, որի դիրքից, հաճախ, կախված է ձայնավորների որակը:

Այսին շնորհալուրի ձայնավորները, չնչին բացառություններով, մնում են անփոփոխ, ապա շնորհալուրի վանկերի ձայնավորների մեծ մասը բառի ձևաբանական-բառակազմական փոփոխությունների ժամանակ հնչյունափոխվում է:

Մշո բարբառում, ինչպես և հայերենի մի շարք այլ բարբառներում, երկրաբառների դիմաց կան պարզ հնչյուններ:

Այ երկրաբառի դիմաց, բարբառը ունի է, ո, ի, օ սայլ>սէլ, հայր>հէր, գայլ>գէլ, խայթ>խէթ, այսքան>իդքան, այստեղ>իդատյէզ, փայլել>փիլալ, այս>իդա, ըդի, այն>ինա, ընի, պայծառ>պօձառ, պայծառանալ>պօձրոնալ:

Այ հնչյունախումբը պարզեցվում է և բառավերջում. երեսայ>էրէխա, փեսայ>փէսա և այլն:

Աւ — երկրաբառի դիմաց բարբառն ունի օ՝ աւր>օր, աւձ>օց, եւ-ի դիմաց՝ է, ցորեան>ցօրէն, իւ-ի դիմաց՝ ու, է, ի՝. արիւն>արուն, ագրիւր>յախպուր, գիւղ>ղէզ, մրջիւն>մոչէմ, հարիւր>հարիր:

Ոյ երկրաբառի դիմաց, գրեթե միշտ, հանդիպում ենք ու ձայնավորին ոյթ>ութ, լոյս>լուս, բոյո>բուս և այլն:

Ձնայած երկրաբառների պարզեցման օրինաչափ երևույթին, Մշո բարբառում առկա են գրաբարյան երկրաբառներ պարունակող բառեր հայլի, մայրիգ (վերջինս ունի և մէրիգ ձևը):

Մշո բարբառում հին հայերենի բազմաձայնական սխտեմը զգալի փոփոխությունների է ենթարկվել:

Ինչպես ասվեց, բառասկզբում բ, գ, ո, ա. օ ձայնեղ պայթականների դիմաց բարբառում կան ձայնեղ չնչեղ պայթականներ՝ բ, գ, դ, օ. օ բարի>բարի, գարի>գարի, դարիւն>դարփին, ձի>ձի, ցուր>ջուր:

Բառամիջում ձայնեղ պայթականները անփոփոխ են մնում ձայնավորներից՝ ինչպես նաև մ. ա. ոնգայիններից հետո. սակայն, ձայնեղ պայթական զ-ի դիմաց կա նաև չնչեղ խուլ բ:

Ձայնեղ պայթականների դիմաց բարբառն բառամիջում և բառավերջում խուլ պայթականներ ունի խուլ չփականներից, չնչեղ խուլներից հետո:

Բառավերջում բ-ի դիմաց բ կա ձայնավորներից և մ ոնգայիններից հետո, գ, գ, զ-ի դիմաց գ, գ, զ՝ միայն ոնգայիններից հետո:

Ձայնեղ պայթական բ-ի դիմաց բառավերջում կա նաև խուլ պայթականն ալ՝ խուլ չփական լւ-ից հետո: Մնացած դեպքերում ձայնեղ պայթականներին բարբառում, բառավերջում համապատասխանում են խուլ չնչեղ պայթականներ՝ բ—փ, գ—ք, դ—թ, դ—ց, զ—չ ձայնավորներից և ո, բ ձայնորոշներից հետո: Բացի վերոհիշյալ դեպքերից ձայնեղ պայթականները բարբառում, բառավերջում մնում են անփոփոխ:

Ուստի պայթականները Մշո բարբառում, բառասկզբում մնում են անփոփոխ, բացառյալ եղակի դեպքերը, երբ ալ-ի դիմաց կա խուլ չնչեղ պայթականն ալ կամ ձայնեղ բ կա (փրքցալ, բրդի):

Բառամիջում խուլ պայթականները անփոփոխ մնալով խուլ չփականներ մ, ջ, լւ-ից, ձայնավորներից հետո, վեր են ածվում ձայնեղ պայթականների երկու ձայնավորների միջև, ձայնավորներից, ո, բ, ձայնորոշներից հետո: Բառավերջում խուլ պայթականները, առանց բացառության, ձայնեղանում են:

Խուլ շնչեղ պայթականները Մշո բարրառում, որպես օրենք, մնում են անփոփոխ, հաղվադեպ նրանց դիմաց կան ձայնեղ պայթականներ:

Ձայնեղ շփականները բարրառումս մեծ մասամբ մնում են անփոփոխ:

Բացառություն է կազմում ուն. որի դիմաց բարրառս խ ունի:

Խուլ շփականները և ձայնորդները բարրառում, շնչին բացառություններով, մնում են անփոփոխ:

Հնչյունափոխական այս և մի շարք այլ երևույթներից բացի, Մշո բարրառում անդի է ունենում հնչյունների անկման հավելման առնաման և տարնաման երևույթներ:

1. ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐ ԵՎ ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Մշո բարրառը, հայոց լեզվի մյուս ուսումնասիրված բարրառների համեմատությամբ, հարուստ է հոգնակերտ մասնիկներով:

Բարրառն ունի հոգնակի կազմող հետևյալ մասնիկները.

ք, էք, յէք, նյէք (եր, ներ), դիք, վդիք, դանք, անք, վանք, րանք, ունք, ըունք, վի, իք, ստան, էրք:

Թեև, երբեմն, բարրառում հոգնակերտ մասնիկները փոխարինում են մեկը մյուսին, բայց նրանց դործածության մեջ ակնթախ են գործուն օրինաչափությունները, որոնց հետևանքով բառերի որոշակի խմբերը հոգնակի են կազմում հատուկ մասնիկներով:

Ք — հոգնակերտ մասնիկ ստանում են հայերեն և փոխառյալ պարզ ու ածանցաբար այն բոլոր բաղադրանի բառերը, որոնք վերջանում են ի-ով, ինչպես գ'իմի հզն. գ'իմիք, առծըլի հզն. առծըլիք, քէնի հզն. քէնիք, ջ'օրի հզն. ջ'օրիք, հօքի հզն. հօքիք, գ'արի հզն. գ'արիք, տարի հզն. տարիք, հըշկի «սառնամանիք» հզն. հըշկիք, դօլչի «թմբկահար» հզն. դօլչիք, խուռուխչի «հսնդապահ» հզն. խուռուխչիք և այլն:

էք — հոգնակերտ մասնիկ ստանում են այն բոլոր միավանի և բաղադրանի բառերը, որոնք բարրառում վերջանում են ա ձայնավորով:

Արդսնս հզն. սրդանէք, ճամփս հզն. ճամփէք, էրիսս հզն. էրէլսէք, տըղս հզն. տըղէք, քսանս հզն. քսանէք, փնսս հզն. փնէք, դավս «ուղտ» հզն. դավէք, քավիս «գոմ» հզն. քավիէք, բօշս «գնչու» հզն. բօշէք, լանգս «աքացի» հզն. լանգէք և այլն:

Այսպիսով, ինչպես պարզորոշ կերպով ցույց են տալիս բերված օրինակները, էք հոգնակերտ մասնիկի է-ն արդյունք է բառավերջի ալ-ի հընչյունափոխության (սառնամանիք = սրդանէք) այդ տեսակետից եթե դիտելու լինենք, ապա պետք է ասել, որ էք հոգնակերտ մասնիկը նույնանում է նախորդի՝ ք-ի հետ:

Բարրառում ի-ով և ա-ով վերջացող վերոհիշյալ և այլ բառերը հոգնակի կարող են կազմել և ստան մասնիկով: Այսպես, գ'արի հզն. գ'արէստան, գ'իմի հզն. գ'իմէստան, տարի հզն. տարէստան, օսլի հզն. օսլէստան, քէնի հզն. քէնէստան, էրէլսս հզն. էրէլստան, փնսս հզն. փնէստան և այլն:

Այս օրենքից բացառություն է կազմում տղա բառը, որը թեև վերջանում է ա — ձայնավորով, բայց-ստան մասնիկով հոգնակի չի կազմում: Տղա բառի հոգնակի տըղէք ձևից բացի բարրառում լայն տարածում ունի

տրդեցնելը ձևը, որը թվում է կրկնակի հոգնակի մասնիկ ստացած՝ տղա-տրդեք-սպելքներ, որտեղ ք-ի դիմաց կա կ խուլ բաղաձայն հնչյունը:

Միակ բառը, որը չունի ոչ ա և ոչ ի վերջավորութունը, բայց հոգնակին կազմում է-ստան մասնիկով, այդ գէղին բառն է, որի հզն. կլինի, գէղըստան:

Յէր-(եր) հոգնակերտ մասնիկով հոգնակի են կազմում.

ա) բոլոր միավանկ բառերը՝

հաց հզն. հացյէր, ջուր հզն. ջըրյէր, տուն հզն. տընյէր, ծուռ «սեւադար» հզն. ծոռյէր, գումար հզն. գոմյէր և այլն:

բ) Քով վերջացող մեկ, մեկ և կես, երկու վանկ ունեցող բառերը այսպէս. խնայէր հզն. խնայէր, միտք հզն. մըտքյէր, ձյէր հզն. ձյէր, աչք հզն. աչքյէր, պարսպ հզն. պարսպյէր, բալնիք հզն. բալնիքյէր (նաև բալնիքսնյէր) և այլն:

Նյէր-(ներ) հոգնակերտ մասնիկ են ստանում.

ա) դրարարում և-ով վերջացող և բարբառում այն կորցրած բոլոր բառերը. այսպէս. գառ հզն. գառնյէր, դուռ հզն. դըռնյէր, մաղ հզն. մաղնյէր, բուռ հզն. բըռնյէր, կուռ հզն. կըռնյէր, նուռ հզն. նըռնյէր, մուգ հզն. մըգնյէր և այլն:

բ) Այս մասնիկով հոգնակի կազմում են երկվանկ և բազմավանկ բարդ և ածանցավոր բառերը, օրինակ՝

ամիս հզն. ամսոնյէր, աման հզն. ամնյէր, անրյէր հզն. անթընյէր, անիծ հզն. անձընյէր, յըրօր հզն. յըրօրնյէր, ավել հզն. ավըլնյէր, ավերագ հզն. ավըրագնյէր և այլն:

Բրբեւ ընդհանուր կանոն պետք է նշել, որ -յէր և -նյէր հոգնակերտ մասնիկները բարբառում գերակշիռ դեր են կատարում: Բոլոր այն բառերը, որոնք բարբառում հոգնակի իմաստ են արտահայտում այլ մասնիկների միջոցով, կարող են հոգնակի թիվ կազմել վերոհիշյալ երկու մասնիկների օգնութեամբ. մինչդեռ այն բոլոր բառերը, որոնց հոգնակին կազմւած է այս մասնիկների օժանդակութեամբ ոչ մի գեղում այլ հոգնակերտ ստանալ չեն կարող:

Մեր միտքը ավելի պարզելու համար բերենք մի քանի օրինակ.

գառի, գիւնի, տարի, օսկի, հօքի, փխա, էրէխա, քնդա, քասա, սպնակա լանգա տաքացի և ի, ա ձայնավորով վերջացող շատ ուրիշ բառեր, որոնք, ինչպէս տեսանք, հոգնակի թիվ են կազմում ք, -ստան մասնիկների միջոցով, հոգնակի իմաստ կարող են արտահայտել նաև -նյէր մասնիկի միջոցով, մինչդեռ շատ միավանկ և բազմավանկ այնպիսի բառեր, ինչպիսիք են գ ուղ, փ ուղ, հաւ, ջուր, ամիս, ավել, խաչէրգաթ աշօղութեան և այլ բառեր, -յէր և -նյէր-ից բացի, այլ հոգնակերտ մասնիկ չեն ստանում:

Այս բնդհանուր օրենքից բացառութիւն են կազմում մարմնի կրկնակ անդամների անունները՝ օտք, ձյէր, աչք, որոնք հոգնակի կարող են կազմել -վի մասնիկի միջոցով՝ այսպէս, աչվի, ձեռվի, օղվի:

Քառ կերպով -յէր և -նյէր հոգնակերտ մասնիկներ կարող են ստանալ այն բոլոր բարդ բառերը, որոնց եզրի բաղադրիչ բառը միավանկ է, այսպէս՝ հօրքուր հզն. հօրքուրյէր, նաև՝ հօրքուրնյէր, սանահէր հզն. սանահէրյէր, նաև՝ սանահէրնյէր, անէրծաք հզն. անէրծաքնյէր, անէրծաքնյէր, կընքա-

նէր հգն. կընքահէրյէր նաև կընքահէրյէր, քալօրմէր հգն. քալօրմէրյէր նաև քալօրմէրյէր և այլն:

Մշո բարբառում -դիք հոգնակերտ մասնիկ են ստանում արյունակցական և ազգակցական հարաբերություններ ցույց տվող հետևյալ բառերը՝ տէքըր հգն. տէքըրդիք, ախպէր հգն. ախպըրդիք, հոխպէր հգն. հոխպըրդիք, մօրքուր հգն. մօրքըրդիք, հօրքուր հգն. հօրքըրդիք, տէքօրկընիգ հգն. տէքօրկընգըրդիք, կընիգ հգն. կընգըրդիք տալվ հգն. տալվըրդիք և այլն:

Վերոհիշյալ բառերի կարգին դասվող քուր բառի հոգնակին կազմվում է -վդիք մասնիկով. քուր հգն. քուրվըրդիք:

Դանք մասնիկ ստանում են համեմատարար սակավաթիվ բառեր. այսպես. չընգյէր հգն. չընգէրդանք, կրդուօր հգն. կըղօրդանք, օսկուօռ հգն. օսկըղանք և այլն:

Տէր բառի հոգնակին կազմվում է -վըղանք մասնիկով՝ տէր հգն. տիրվըղանք:

Այս բառերից չընգյէր և տէր բառերը հոգնակի կարող են կազմել նաև դիք մասնիկով՝ այսպես. չընգէրդիք, տիրվըրդիք:

Անք հոգնակերտ մասնիկ են ստանում հետևյալ բառերը՝ ձի հգն. ձիանք, գ'էլ հգն. գիլանք, էշ հգն. իշանք, էձ հգն. իձանք:

Վերջին երկու բառերի հոգնակին կազմվում է նաև -վանք մասնիկով.

էշ հգն. իշվանք, էձ հգն. իձվանք: Բացի դրանցից, -վանք հոգնակերտ մասնիկ ստանում են նէղ ժառանգող հգն. հիդվանք, նուօր շշորի ծայր. ժողանցք՝ նօրվանք, հուդ հգն. հըրվանք բառերը:

Բանք մասնիկով հոգնակի թիվ են կազմում հետևյալ գոյականները՝ գ'էղ հգն. գ'էղրանք, ալէխ հգն. տլխրանք, դ'էգ հգն. դ'իգրանք, դ'յէղ հգն. դ'էղրանք:

Դ'յէղ բառի հոգնակին կազմվում է նաև բունք մասնիկով՝ դ'եղրունք:

Ունք և -րունք հոգնակերտ մասնիկ են ստանում՝

Օրք հգն. Օրքունք, ծաղիգ հգն. ծաղգունք լօրղու հգն. լօրղունք:

Միակ բառը, որ ստանում է -իք հոգնակերտ մասնիկը մարթիք բառն է:

Ինչպես երևում է բերված օրինակներից գրեթե բոլոր հոգնակերտ մասնիկները (բացի վի) վերջում ունեն ք հնչյունը, որպես մեր լեզվի հոգնակիացուցիչ մասնիկներից մեկը: Այդ բոլոր մասնիկները բառին հոգնակի իմաստ կարող են տալ նաև առանց այդ ք-ի, բացի դիք, -վըրդիք և -ունք մասնիկներից: Այսպես. չընգյէր հգն. չընգէրդանք բայց և չընգէրդան, տէր հգն. տիրվըղանք բայց և տիրվըղան, էձ հգն. իձվանք բայց և իձվան, գէղ հգն. գ'էղրանք բայց և գ'էղրան, ձ'ի հգն. ձ'իանք բայց և ձիանք և այլն:

Լինդ բառը հոգնակի է կազմում էրք մասնիկով. լինդ հգն. լընդէրք:

Մշո բարբառում մեծ տարածում ունեն բաղադրյալ հոգնակիները: Թեև բարբառի գրեթե բոլոր հոգնակերտ մասնիկները արգեն բաղադրյալ են (դի-ք, ր-դի-ք, դ-ան-ք, ր-ուն-ք) այնուամենայնիվ հոգնակի թիվ ունեցող շատ բառեր կարող են նորից հոգնակերտ մասնիկ ստանալ, որը, երբեմն, հետևանք է հոգնակի իմաստի միագնման. Մշո բարբառում բաղադրյալ հոգնակի կազմվում է ամենից շատ ք և -նյէր մասնիկները հոգնակերտ այլ մասնիկների վրա ավելացնելու միջոցով. այսպես՝ տէր հգն. տիրվըղան, տիրվըղանք տիրվըղանքնյէր, ձի հգն. ձ'իան, ձ'իանք, ձ'իանքնյէր:

հօքի հզն. հօքէստան, հօքէստանք, նէդ հզն. նիդվան, նիդվանք նիդվանքնէր և այլն:

Հալաքական իմաստ արտահայտելու համար քարաքանդ կիրառում են -անք և -յէնք մասնիկները. այսպէս՝ անէր—անէրանք, կէսուր—կէսրանք և Ավիկ—ավիգյէնք՝ Գուրօ—գուրօյէնք և այլն:

2. ՀՈՒՈՎՆԵՐ ԵՎ ՀՈՒՈՎՈՒՄ

Մշտ քարաքանդ ունի հետևյալ վեց հոլովները. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական: Հոլովումը քարաքանդում կատարվում է խառը՝ ներքին հնչյունափոխությամբ կամ վերջավորություններով (դուռ—դրոտան, սէղան—սէղնի):

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է:

Եզակի սեռականը կազմվում է բառի ուղիղ ձևի վրա հոլովման վերջավորությունները ավելացնելու միջոցով:

Ինչպէս արդի գրական հայերենում, այնպէս էլ Մշտ քարաքանդում, տրական հոլովը անորոշ առման գեպքում նման է սեռականին, իսկ որոշյալի գեպքում ավելանում է ն հոգը:

Թե՛ շնչավոր և թե՛ անշունչ առարկաների հայցական եզակին քարաքանդում միշտ նման է ուղղականին: Միայն ա—ով վերջացող բառերի հայցականը տարբերվում է ուղղականից (ուղղ. սրահանա, սեռ. սրդանի, հայց. րզսրդանէն):

Հայցական հոլովը ունենում է որոշյալ և անորոշ առումներ: Որոշյալ հայցականը ստանում է զ նախդիրը: Բաղաձայնով սկսվող բառերից առաջ այն հնչում է ըզ, իսկ ձայնավորներից առաջ զ: Այսպէս՝ ըզտուն, ըզնաց, ըզջուր, բայց զաստված, գիրիգ, զուսում և այլն: Որոշյալ հայցականի գեպքում, բացի բառասկզբի զ(ըզ) նախդիրից, բառավերջում ավելանում է ն, եթե բառը վերջանում է ձայնավորով և՛ ըն, եթե՝ վերջանում է բաղաձայնով (ըզգիւնիւն, ըզջուրիւն): Սակայն առանց այդ վերջավորությունների միայն զ, ըզ— նախդիրով քարաքանդում որոշակի իմաստ է արտահայտվում:

Բացառական հոլովի եզակին քարաքանդում կազմվում է բառի ուղիղ ձևի վրա է, էն, ու, ուց, իգ, ա վերջավորությունները ավելացնելու միջոցով:

Բացառական հոլովի այդ վերջավորությունների միջև որոշակի սահմանադատություն գոյություն ունի: Ըց, է, էն—ը ավելանում են գոյականներին, ավելի հաճախ, շնչավոր ցույց տվող գոյականներին, ա, ազ, ու—ն՝ տեղանուններին:

Ու և ա հոլովման ենթարկվող բառերի սեռական և բացառական հոլովները ձևով նման են իրար. օրինակ.

Յէս տէսէր իմ Մըշու գաշտ (ևս Մուշի գաշտը տեսել եմ)

Յէս Մըշու գիքամ (ևս Մուշից եմ գալիս)

Խըլաքա հարսնյէր խօրուօդ ին (Խլաթի հարսները գեղեցիկ են)

Յէս Խըլաքա գիքամ (ևս Խլաթից եմ գալիս):

Քարաքանդում ա ձայնավորով վերջացող բառերի բացառական հոլովը կազմվում է միայն —ից մասնիկով:

Գործիական հոլովի եզակին կազմվում է բառի եզակի ուղղականի վրա

ուով վերջավորությունը ավելացնելու միջոցով (Տուն—տընուով, Կուլ—ք'րքուով): Նույն ձևով կազմվում է բացառական հոլովի հոգնակին միայն այդ դեպքում հոլովակետով մասնիկը ավելանում է բառի հոգնակի ուղղականի վրա:

Մշո բարբառը, ինչպես և Վերջ ճյուղի մյուս բարբառները, ներգոյական հոլովի համար հատուկ ձև չունեն: Ներգոյական հոլովի իմաստը արտահայտվում է բառերի՝

ա) Սեռական հոլովով և մէջ—մեջ ետադրությամբ՝

Սեղնի մէջ, տան մէջ:

բ) Տրական հոլովով և մըջ—մեջ նախադրությամբ՝

մըջ քախքին, մըջ փէղին:

գ) Հայցական հոլովով՝

Քաղաք, գ'ղ

Քաղաք շատ մարք կէր (քաղաքում շատ մարդ կար):

Բոլոր գէղ շաք խօրուօդ հարս կէր (այս գյուղում շատ գեղեցիկ հարս կար):

Բոլոր բառերի հոգնակիները, չնչին բացառությամբ, անկախ հոլովում մից և հոգնակերտ մասնիկների տեսակից ենթարկվում են ու հոլովման:

Այս օրենքից բացառություն են կազմում -ղիք, -էնք, և ք մասնիկներով հոգնակի կազմող բառերը, որոնցից -ղիք-ով հոգնակի կազմող բառերի հոգնակի սեռականը կունենա -դուօց (քորվըղիք—քորվըդուօց), -էնք-ով կազմողներինը՝ -յէնց (Ալիգէնք,—Ալիգէնց), իսկ ք-ով կազմողներինը՝ -ուօց (գարիք—գարէքուօց) վերջավորությունները:

Մշո բարբառն ունի ութ կանոնավոր հոլովում ու, ի, աւն, վա, ուօր, ուօշ ա, ց:

Եթե գոյականների հոգնակի թվի կազմության մասին խոսելիս նշեցինք, որ հոգնակերտ մասնիկների կիրառման մեջ կա զգալի բազմազանություն, որ միևնույն բառը կարող է երկու, նույնիսկ, ավելի հոգնակերտ մասնիկներ ստանալ, ապա մի հոլովիչով հոլովվող բառը երբեք այլ հոլովիչ ընդունել չի կարող:

Այս օրենքից բացառություն են կազմում՝ տէքըր բառը, որը հոլովվում է երկու կերպ. Տէքըր—տէքէր—տէքուօր և ում-ով վերջացող բառերը, որոնք ի-ով հոլովվելով հանդերձ կարող են ստանալ աւն հոլովիչը՝ կօղօրում—կօտօրմւն—կօղօրումի:

Ու հոլովումը բարբառում ամենատարածվածն է:

Այս հոլովման են ենթարկվում.

ա) Մեկ և ավելի վանկ ունեցող այն բոլոր բառերը, որոնք վերջանում են ի-ով. օրինակ, գ'ինի, օսկի, հօքի, խընամի, գ'էրի, բի, ձի, հայլի, սինի և այլն:

բ) -էցի, -ացի, -չի, -ազ, վերջածանցներով կազմված մի շարք բառեր. Մըջէցի, գ'էղացի, դ'օլչի, մըշազ, մանիշազ և այլն:

գ) Գոյականաբար գործածվող բոլոր անորոշ դերբայները:

դ) Ազգերի անունները՝

Հայ, վըրսցի, բուրք և այլն:

Բացառություն են կազմում ուռուս, տաջիգ, պարսիկ բառերը, որոնք հոլովվում են ի—հոլովիչով:

ե) Գոյականաբար գործածվող անխակական կապերը՝ մեշ, նէրս, կուշտ, քով չկողք», դէհ՝ յառչև, գ՛ուս և այլն:

զ) Հատուկ անուններից՝ Քրիստոս և Աբրահամ անունները:

է) Կրօնական խմաստ ունեցող հետևյալ բառերը՝ աստված, վանք, դ՛ըծուօխք, դ՛ըրախտ, յեգէդէցի, ժամ, յէրէց, խունգ, սուրի, յէրիսկօթօս:

ը) Մի շարք կենդանիների անուններ. խուօզ, բ՛ադ, գ՛էլ, կուօվ, մադսգ, օց, օզնի, կաքավ, ճէդ, հավ, ուլ, էրինջ, սարէգ, սգոավ, լագլագ, քյավէջ, սդվէս, գ՛օմէշ, էձ, ճուդ, դ՛էլ չէդ շուն», առչ, աչառ, գ՛ըռթան, կըռունգ, ճընջդուգ, լաբրստրագ, էդըվնէգ, յամնայէդ, մաքի, լօր, արնիֆ և այլն:

թ) Մարդու մարմնի մասերի և անուններից.

գ՛ըլօխ, անգաջ, ճագադ, փուօր, էրյէս, կուշտ չկողք», սիրդ:

ժ) Արյունակցական հարաբերություններ ցույց տվող.

զավագ, էրէխս, օռթի, պաբ չհայր», մամ չմայր» բառերը:

ի) Մի շարք միավանկ և ավելի վանկ ունեցող բառեր.

բ՛ուն, ամիս, գ՛ուօմ, կարօդ, մուք, ջ՛առթ, ծուռ, գ՛օլ չլճակ», թուր, քուն, դ՛էգ պուօշ, ձ՛ուօր, ջ՛ուր, հուօր, մուր, սէր, ծուօվ, դ՛ուօշ, ձ՛էն, դիր չանգամ», մուօմ, մըծ չմարախուդ», քունջ չանկյուն», պառսվ, ամօթ, ծաքավ, գուօդ, ան, քաքվուօր, ճըվթ, կըրագ, կըսկիձ, քուն, ծուխ, ծուօց, ծաղըր չծիծաղ», կուռք, կուս, ինադ, չիր, տիլ չցեխ», ցավ, չուօլ, սօլ չկոշիկ», հուօդ, ուամ, հուօվ, փուշ, ձէթ, փուօդ և այլն:

լ) Մի քանի տեղանուններ.

Մուշ, Մանագգէրդ, Տադէշ, Բադէշ, Բիթլիս, Ալաշկյէրդ, քըռթագուօմ և այլն:

խ) Բնության մի քանի մարմինների և երևույթների անուններ.

էրգինք, էրգիր, արէվ, լուս, անձրէվ, քամի, մուք, ցուրդ, շուօք և այլն:

ծ) Ում-ով վերջացող էթում բառը:

կ) Ամիսներից աբրիլ-ը:

Այս հոլովման վերջավորություններն են

Եզակի		Հոգնակի
— ուղղ., հայցական —		—
սեռ.	ու	ու
տր.	ուն	ուն
բաց.	ուցից, էն, է	ուցից, էն է
գործ.	ուօվ	ուօվ

Այս վերջավորությունները ավելանում են բառերի եզակի և հոգնակի թվերի ուղղական հոլովների վրա: Ու հոլովման եզակի և հոգնակի վերջավորությունները նույնանում են:

Պատկերը ավելի պարզ դարձնելու համար բերենք ու հոլովման մի օրինակ.

Եզակի		Հոգնակի
ուղղ.	ջուր	ջըրյէր
սեռ.	ջըռու	չըրէրու
տր.	ջըռու(ն)	ջըրուրու(ն)
հայց.	(ըդ)ջուր(ըն)	(ըդ)ջըրյէր(ըն)

բաց. ջրբույս, ից, էն, է
դործ. ջրբույսով

ջրբերուց, ից, էն, է
ջրբերուով

Ի հոլովումը—ու-ից հետո բարբառում ամենատարածվածն է:
Այս հոլովմանն են ենթարկվում.

ա) Ու-ով վերջացող միավանկ և բաղմավանկ բառերը՝
յառու, կաղու, ձու, լու, չարսու շուկա և այլն:

բ) ագան, էլիք, ությէն, ուօղ, ուզ, իզ, անք, ում վերջածանցներ
ունեցող բառերը ինչպես և ազ վերջածանց ունեցող մի քանի բառեր:
Բացառություն են կազմում իզ-ով վերջացող հատուկ անունները (Սաղիզ,
Ավիզ), որոնք հոլովվում են ա հոլովմամբ, ազ-ով վերջացող կենդանիների
անունները (լազլազ, լարստրազ), որոնք հոլովվում են ու հոլովմամբ և
ում-ով վերջացող էթում ժորթ բառը, որը հոլովվում է ու հոլովիչով:

գ) Բարբառում ա ձայնավորով վերջացող բոլոր բառերը:

դ) Բոլոր ամիսների անունները, բացի մարդ և արքյէլ-ից:

ե) Մի շարք բառեր.

ախշար, քաղաք, օխշար, օքուզ, ախշադանք, արմադ, աման, ավազ,
աղանձ, հաց, խիղջ, գ'ուքան, միրան, ժժ'իրան և արաք, թան, պանիր
և այլն:

զ) ուն-ով վերջացող արուն բառը:

Այս հոլովման վերջավորություններն են

Եզակի	Հոգնակի
ուղղ. հայց. —	—
սեռ. ի	ու
տր. ին	ուն
բաց. է, էն, ից	ուց, ից էն. է
դործ. ուով	ուով

Ի հոլովման մի օրինակ

Եզակի	Հոգնակի
ուղղ. գուլան	գուլանյէր
սեռ. գուլնի	գուլներու
տր. գուլնի(ն)	գուլներուն
հայց. (ըզ)գուլան(ըն)	(ըզ)գուլնյէր(ըն)
բաց. գուլնից է, էն	գուլներուցից, էն, է
դործ. գուլնուով	գուլներուով

Վա հոլովմամբ հոլովվում են ժամանակ ցույց տվող բոլոր բառերը,
որոնց թվում և այն բարդ բառերը, որոնց եզրի բաղադրիչը ժամանակ է
ցույց տալիս:

Այս հոլովման ենթարկվում են նաև ժամանակ ցույց տվող և գոյա-
կանաբար դործածվող մակրայնները շուղ, քյէզ (շուտ), յանքան, ժուշ շուղուց
սվաղուց և այլն:

Բերում ենք վա—հոլովմամբ հոլովվող բառերի գրեթե լրիվ ցանկը:

Օր, տարի, գախ ժամանակ, սաբախտան ժառանգութեան, հըրամզա
սկիսօր յիրգուն, յառավուօղ, հէրու ժանցյալ տարի, շուղ, շուղուց սվաղուց,
յավալք ժառանգ, յըրօթէ, երգուշափթի, իրէքշափթի, չօրէքշափթի, հինգշափթի,

ուրփաթ, շափաթ, կիրազի, ամիս, զադիգ, թըժատարի (նոր տարի), գ'ա-
րունք, ճըմյէն, սաաթ ժամաժ, էքուց, վաղ, մրգլուօր, չառչի օր, վախտ, ժուգ
ժամանակ», նաշ, ժամանագ, հէրըզն.ում ճնախանցյալ տարի», մրգա ճհիմաժ:

Նշված բառերից շափաթ և առավուօդո կարող են հոլովվել և ու հո-
լովիչով:

Կէս բառը թեև ժամանակ չի ցույց տալիս, բայց երբ դրվում է ժա-
մանակ ցույց տվող բառերի հետ, նույնպես հոլովվում է այս հոլովմամբ՝

Օրուկէս—օրուկիսվա, տարիուկէս—տարիուկիսվա, շափաթուկէս—շափա-
թուկիսվա, կէսօր—կէսօրվա և այլն:

Վա հոլովմամբ չեն հոլովվում ամիսների անունները. թեև նրանք
ժամանակ են ցույց տալիս: Նրանց մեծ մասը ենթարկվում է ի, մեկը՝
(արբյել) ու, մեկը՝ (մարդ) ա հոլովման:

Այս հոլովման ձևը վերջավորութունը անխախտ պահպանվում է բո-
լոր թեք հոլովների եզակիում, բացի հայցականից. վա-ի վրա ավելանում
են մյուս հոլովների վերջավորութունները: Կան դեպքեր, երբ այդ վերջա-
վորութունը թեք հոլովներում չի պահպանվում, և թեք հոլովների հոլովա-
կան վերջավորութունները ավելանում են ուղղակի բառահիմքային՝ տարի—
տարվանից—տարվանով բայց և տարուց, տարուով:

Ան հոլովման ենթարկվում են.

ա) Ում-ով վերջացող բոլոր բառերը, որոնք միաժամանակ ենթարկ-
վում են նաև ի հոլովման, բացի էթում բառից:

բ) 'Իրարարում և ունեցող և բարբառում բառավերջի այդ և-ն կորց-
րած բառերը. ինչպես շուրթ խուփ, յէզ, դ'ուռ, նուռ, կուռ, սերմ, փուռ,
ծմյէն, ամառ և այլն:

Սակայն դրարարում և-ով վերջացող և բարբառում այդ և-ն կորցրած
ոչ բոլոր բառերն են ենթարկվում այս հոլովման, նրանք կարող են հոլով-
վել և այլ հոլովիչներով, այսպես, օրինակ՝ խուփ—խրփան, նուռ—նըռան, բայց
գ'ադձ—գ'ադձի, աւյէլ—աւյի և այլն:

գ) Այս հոլովման են ենթարկվում նաև ուն-ով վերջացող բառերը
բացառյալ արուն, քուն, բուն բառերը:

Այս հոլովման ենթարկվող աշուն, գ'արուն բառերը բարբառում ունեն
նաև աշունք—գ'արունք ձևերը, որոնք հոլովվում են վա հոլովիչով:

դ) Մի շարք սովորական միավանկ բառեր՝

ձուռ, զիստա, նուղ, նուօթ ծայր, քղանցք թյէն մեծ ջվալ, թուք,
վիզ, նուշ, շուօթ ծոռնիկ, գուզ «ընկույզ», գունդ, սինձ, մազ, կուղ, կուբր,
կիդուց, կուժ, լինդ, գ'աշ, բառ, բ'ուք, կալ, ծառ, ծիլ, լուձ, սել և այլն:

ե) Կենդանիների անուններից գուօրդը:

Ան հոլովման վերջավորութուններն են

	Եզակի	Հոգնակի
ուղղ. հայց.	—	—
սեռ.	ան	ու, ուն
տր.	ան	ուն
բայ.	ից, էն	ուց, ից, է, էն
դործ.	ուով	ուով

ԱԳ հոլովման մի օրինակ

Եզակի	Հոգնակի
ուղղ. աղագում	աղագումներ
սեռ. աղագումս	աղագումներու
տր. աղագումս	աղագումներու
հայց. աղագումն	աղագումներն
բայց. աղագումէն ից, է	աղագումներուց, ից, է, էն

Մշո բարբառում ուօչ հոլովման ենթարկվում են արյունակցական ազգակցական կապեր ցույց տվող և դրանցից բարդված բառերը, որտեղ ազգակցական արյունակցություն ցույց տվող բառը կազմում է բարդության երկրորդ անդամը, ինչպես նաև մի քանի այլ բառեր. այսպես՝ քուր, տալվ, կիսուր, յընգյեր, տէր, մօրքուր, հօրքուր, ախպէր, հօրօխպէր և այլն:

Տեքր և նրանով բարդված բառերը, ինչպես նշվեց վերևում, ուօչ հոլովմամբ հոլովվելով հանդերձ կարող են հոլովվել նաև տեքեր ձևով: Այս հոլովման եզակի սեռականը և տրականը ձևով նման են իրար:

Այս հոլովման վերջավորություններն են.

Եզակի	Հոգնակի
ուղղ. հայց. —	—
սեռ. ուօչ	ու
տր. ուօչ	ու
բայց. էն, ից, է	է, էն, ից, ուց
գործ. ուօլ	ուօլ

օրինակ

ուղղ. կեսուր	կիսուրներ
սեռ. կիսուրուօչ	կիսուրներու
տրակ. կիսուրուօչ	կիսուրներու
հայց. ըզկիսուրըն	ըզկիսուրներն
բայց. կիսուրօչէ, էն, ից	կիսուրներուց, ից, է, էն
գործ. կիսուրօլուօլ	կիսուրներուօլ

Մշո բարբառում Ա հոլովման ենթարկվում են.

ա) ի՛գ-ով վերջացող մի քանի հատուկ անունները՝ Հօվսիգ, Ավիգ, Մայրիգ, Ծաղիգ, Լուսիգ, Թաթիգ և բացի սրանցից երեք բառ այնչիգ, իրիգ, կընիգ.

բ) այլ վերջավորություն ունեցող հատուկ անուններից Սաագ, Մևարուփ.

գ) մի շարք տեղանուններ՝ Խը՛լըաթ, Կուօփ, Վան, Սասուն, Հացիգ, Բուլանըխ.

դ) ամսի անուններից մարդը:

Այս հոլովման վերջավորություններն են.

Եզակի	Հոգնակի
ուղղ. հայց. —	—
սեռ. ա	ու
տրակ. ըն	ուն
բայց. ա, էն, է	ուց, է, էն
գործ. ուօլ	ուօլ

Ա հոլովման մի օրինակ

ուղղ. խլաթ	հայց. ըղխլաթն
սեռ. խլաթա	բայց. խլաթա, ից, էն
տր. խլաթըն	գործ. խլաթուօլ

Ուօր հոլովման ենթարկվում են հէր, մէր, ախպէր, և սրանցից բարդ-ված բառերը, որոնց մեջ վերոհիշյալները կազմում են բարդության երկ-րորդ անդամը։ Այս հոլովման վերջավորություններն են.

Եզակի	Հոգնակի
ուղղ., հայց. —	—
սեռ. ուօր	ու
տրակ. ուօր	ուն
բայց. է, էն, ից	ուց, ից, է, էն
գործ. ուօլ	ուօլ

Ուօր հոլովման բառերը հոլովվում են հետևյալ կերպ.

Եզակի	Հոգնակի
ուղղ. հէր	հէրյեր
սեռ. հօր	հէրէրու
տրակ. հօրըն	հէրէրուն
հայց. ըղհէրըն	ըղհէրէրըն
բայց. է, էն, ից	հէրէրուց, ից, է, էն
գործ. հօրուօլ	հէրէրուօլ

Բացի վերոհիշյալ որոշակի հոլովակերտ մասնիկներից, Մշո բարբառին հատուկ որոշ բառաձևերում և արտահայտություններում առկա են զրարարյան քարացած հոլովաձևեր. այսպես, օրինակ.

Դու մեղաց տակ մըղալ.

ընի խոսաց տադ չըմա.

խէլաց կըդուր է քու ըսուդ.

քու ըսուդն էլ իմ միաց դացէր է.

իմ օղաց տակ.

Ինչպես տեսնում ենք ընդգծված բառերը զրարարյան հոգնակի սեռականն են. այդ նույն ձևերն են պահպանվել նաև կողքանց, կիսմաց, պաս. լաղնիս, լալնիս, ձեռացագիր բառաձևերում ինչպես նաև օրավուր և այլ արտահայտությունների մեջ և այլն։

Տեղեկագիր 8—8